# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունիսի 2026թ.   N ՄՈ/341-Ա

ք. Արմավիր

### «ՉԱՐԹՈՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տեսչական մարմնի ղեկավարի 2026 թվականի հունիսի 10-ի N 01/05.1/698-2026 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի հունիսի 15-ի N 01/11.1/04312-2026 գրությունը և «Չարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2026 թվականի հունիսի 16-ի N 81 գրությամբ ներկայացրած գրավոր բացատրությունը, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը ոչ պատշաճ իրականացնելու համար.

*Ո ր ո շ ու մ  ե մ՝*

1. «Չարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարեկ Մելքոնյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ